# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱՊՐԻԼ-ՀՈՒՆԻՍ, 2020 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

# ՆԱԽԱԲԱՆ

2020 թվականի 2-րդ եռամսյակում Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործունեությունն ուղղված է եղել Անկախ վավերացնողի կողմից Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման զեկույցում արձանագրված ԱՃԹՆ-ի ստանդարտի 5. 2 և 6. 1 թերակատարված պահանջների գծով ուղղիչ գործողությունների իրականացմանը, դրա համար պահանջվող լրացուցիչ տեղեկատվության հավաքագրմանը և հրապարակմանը, Անկախ վավերացնողի գնահատականի ու վավերացման զեկույցի վերաբերյալ ԲՇԽ-ի մեկնաբանություններով պատասխան փաստաթղթի պատրաստմանը, սահմանված ժամկետում այն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն տրամադրմանը, իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման աշխատանքների մեկնարկին, ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 հաշվետու տարվա ազգային զեկույցի ու հաջորդ տարվա զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի լրամշակմանը, ՀՀ ԱՃԹՆ-ի 2019թ. տարեկան հաշվետության, 2020 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության նախագծերի կազմմանը:

Ս. թ. ապրիլի 9-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը տրամադրել է Հայաստանի վավերացման նախնական գնահատականը և Անկախ վավերացնողի վավերացման զեկույցի նախագիծը: Համաձայն նախնական գնաատականի՝ Հայաստանը 24 պահանջներից 22-ի մասով գրանցել էր բարձր առաջընթաց (18 պահանջի մասով բավարարող (satisfactory) և 4 պահանջի մասով գրազանցող–(beyond) գնահատական), սակայն 2 պահանջի մասով գրանցվել էին թերություններ: Թերությունները վերացնելու համար երկրին առաջադրվել էր 2 ուղղիչ գործողություն՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի 5. 2 (Բնապահպանական և առողջապահական նպատակային ծրագրեր) և 6. 1 (Ընդերքօգտագործման պայմանագրերով պարտադիր սահմանված սոցիալ տնտեսական պարտավորություններ) պահանջների մասով:

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը սահմանված ժամկետում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն ներկայացրեց վավերացման արդյունքների վերաբերյալ ԲՇԽ-ի ընդհանուր մեկնաբանությունները և ուղղիչ գործողությունների գծով լրացուցիչ հավաքագրված ու հրապարակված տեղեկատվությունը ամփոփող պատասխան փաստաթուղթը, որով Հայաստանի ԲՇԽ-ն հայտնում է, որ իրականացված գործողությունների արդյունքում ինքը «բավարարող» է դիտարկում Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների ներդրման առաջընթացը և խնդրում է վերանայել վավերացման արդյունքները: Բոլոր նյութերը հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում՝ https://www.eiti.am/en/annual-reports/2018/ հղումով:

Ուղղիչ գործողությունների մասով ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության, ԲՇԽ-ի, հաշվետու մարմինների և ընկերությունների կողմից իրականացված ծավալուն աշխատանքի նկարագրությունը ներկայացված է սույն հաշվետվության համապատասխան բաժիններում:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցը կազմող Անկախ ադմինիստրատոր «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» (EY) ընկերությունը տրամադրել է ԱՃԹՆ-ի 2018թ. հաշվետվության ոչ ֆինանսական (կոնտեքստային) հատվածի լրամշակված տարբերակը, ինչպես նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ՝ 2018 հաշվետու տարվա զեկույցի նախագիծը, որը տրամադրվել է ԲՇԽ-ի անդամներին և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն՝ մեկնաբանությունների համար:

ԲՇԽ-ի կողմից էլեկտրոնային եղանակով հաստատվել են ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 հաշվետու տարվա ազգային զեկույցի և նախնական ուսումնասիրության շրջանակն ու էականության շեմերը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 հաշվետու տարվա ազգային զեկույցի ու հաջորդ տարվա զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը: ԲՇԽ-ի խմբակցությունները ներկայացրել են թեկնածուներ՝ Անկախ ադմինիստրատորի ընտրության մրցութային հանձնաժողովում ներգրավվելու համար:

ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգստրի գործակալության https://www.e-register.am/ կայքում pdf ձևաչափով բեռնվել են ընկերությունների կողմից ներկայացված իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերը:

Ավարտվել է Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրական սեփականատերերի (ԻՍ) բացահայտման հանրային ռեգիստրի ծրագրային ապահովման համար ծառայությունների գնման գործընթացը, մրցութային կարգով ընտրվել է VXSoft ընկերությունը, 2020թ. մայիսի 12-ին կնքվել է պայմանագիր և մեկնարկել են ԻՍ ռեգիստրի մշակման աշխատանքները: ԲՇԽ-ին, ինչպես նաև հայտարարատու ընկերություններին կարծիքի համար տրամադրվել է ԻՍ ռեգիստրի կառուցվածքի նախագիծը:

ԱՃԹՆ-ի 2016-2017 թվականների զեկույցում և Հայաստանում վավերացման առաքելության հանդիպումների ժամանակ բնապահպանական ծրագրերի հաշվետվողականության և ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերից մասհանումների հատկացման մասով արձանագրված բացերի կարգավորման ուղղությամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մշակած ««Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մայիսի 27-ին ընդունվել է Ազգային ժողովի կողմից:

Մեկնաբանության համար ԲՇԽ-ի անդամներին է տրամադրվել Համաշխարհային բանկի «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության» դրամաշնորհային ծրագրի շրջանակում ՀՀ կառավարության կողմից պատվիրված «COVID-19-ի ազդեցության գնահատումը հանքարդյունաբերության ոլորտի վրա» հաշվետվության նախագիծը:

Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի և ազգային քարտուղարության ներկայացուցիչները մասնակցել են ԱՃԹՆ-ի խորհրդի 47-րդ հեռահար նիստին, մի շարք հեռահար միջոցառումների և քննարկումների, շարունակվել է համագործակցությունը միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ:

Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության կողմից ներկայացվել է ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցության նոր անդամների կազմը:

*Համաձայն Հայաստանի Հանրապետության 2019-2020թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:*

## ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-ի 2020Թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 1. **ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի կատարելագործված տարբերակ՝ տվյալները բաց տվյալների սկզբունքով, օգտագործողի համար մատչելի եղանակով հասանելի դարձնելու համար գործիքների ապահովմամբ<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 4. **Կայքի ընթացիկ սպասարկում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝*<br>Ընթացիկ | Ընթացիկ | ընտրված կազմակերպություն, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 5. **ԱՃԹՆ կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>Կայքում հրապարակված զեկույցներ, հաշվետվություններ, տեսագրությունների, իրավական ակտեր, նորություններ<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ | |

| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 6. **Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
|---|---|---|---|---|
| | *Արդյունքները՝* տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ԱՃԹՆ-ի զեկույց, զեկույցի սեղմագիր, տեղեկատվական տեսահոլովակներ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 7. **Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով** (YouTube, Twitter, facebook **և այլ ցանցեր**) | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 8. **Իրազեկվածության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Հանդիպումներ (այդ թվում՝ մարզային), հանդիպումներ կրթական հաստատությունների հետ, հանդիպումներ լայն | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | խմբակցությունների հետ<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Ընթացիկ | | | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 10. **ԱՃԹՆ-ի** 2-րդ **զեկույցի պաշտոնական ներկայացում** / **կոնֆերանս**, **իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ներկայացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>ԱՃԹՆ-ի կոնֆերանս<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Երրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 11. **«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ վերաբերյալ տեղեկատվական**/ **ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>ԱՃԹՆ-ի և հանքարդյունաբերության վերաբերյալ կրթական տեսանյութեր<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Չորրորդ եռամսյակ | Ընթացիկ | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 12. **«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում/ քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում** | *Արդյունքները՝* ԱՃԹՆ-ի վերաբերյալ մոդուլներ ԲՇԽ-ի, ՔՀԿ-ների, ՔԵԿ-ների, տեղական խմբերի և ակտիվիստների համար և դասընթացներ թիրախային խմբերի համար (ԲՇԽ, ՔՀԿ-ներ, տեղական խմբեր և ակտիվիստներ)<br><br>*Վերջնաժամկետը՝* 2020թ. | Ընթացիկ | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 1. ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում*
*Միջոցառում 4. Կայքի ընթացիկ սպասարկում*

Հաշվետու ժամանակահատվածում, համաձայն կնքված պայմանագրի, «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն շարունակել է խորհրդատվություն տրամադրել առցանց հաշվետվության համակարգում տվյալների մուտքագրման ժամանակ առաջացող խոչընդոտների վերաբերյալ, ինչպես նաև լուծել մուտքագրման ժամանակ բացահայտված ծրագրային խնդիրները:

*Միջոցառում 5. ԱՃԹՆ-ի կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ*

Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում համալրվել է բոլոր բաժինների բովանդակությունը, բաց տվյալների կանոններով հանրությանը հասանելի են դարձել և հրապարակվել են ԱՃԹՆ-ի վերաբերյալ իրավական ակտերը, փաստաթղթերը, տեղեկություններն ու նորությունները: Կայքի նոր տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն՝ օտարալեզու օգտվողների համար:

*Միջոցառում 6. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում*

Կայքում հայերեն և անգլերեն լեզուներով հրապարակվել է ԱՃԹՆ-ի ընթացիկ գործունեությունը լուսաբանող 3 նորություն,[1] հրապարակվել է բնապահպանական և առողջապահական նպատակային ծրագրերի[2] և ընդերքօգտագործման պայմանագրերով պարտադիր սահմանված սոցիալ տնտեսական պարտավորությունների[3] վերաբերյալ թարմացված և համապարփակ տեղեկատվություն):

*Միջոցառում 7. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, facebook և այլ ցանցեր)*

Շարունակաբար թարմացվել են Facebook[4], YouTube[5] և Twitter[6] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, դրանց միջոցով հանրային հասանելություն է ապահովվել ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտը լուսաբանող տեղեկատվության համար:

*Միջոցառում 8. Իրազեկության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում*

COVID-19 համավարակի պատճառով ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ հաշվետու ժամանակահատվածում միջոցառումներ չեն իրականացվել:

*Միջոցառում 10. ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի պաշտոնական ներկայացում / կոնֆերանս, իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ներկայացում*

ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցը կազմող Անկախ ադմինիստատոր «Էրնսթ ընդ Յանգ» ընկերության ս.թ. մայիսի 8-ի էլեկտրոնային նամակ-խնդրանքի հիման վրա՝ ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի պաշտոնական ներկայացումը հետաձգվել է 2020թ. 3-րդ եռամսյակ: Ընկերությունը նշել էր, որ համաճարակով պայմանավորված նոր

---

[1] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

[2] https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B6%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D6%80/?tab=87

[3] https://www.eiti.am/hy/%D5%8D%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC-%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/?tab=90

[4] https://www.facebook.com/EITIArmenia/

[5] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A

[6] https://twitter.com/EITI_Armenia

աշխատանքային պայմաններում հնարավոր չի տրամադրել զեկույցի նախագիծը նախատեսված ժամկետում, ուստի խնդրում են երկարաձգել է կնքված պայմանագրի ժամկետը: Ընկերության խնդրանքը ընդունվել է և պայմանագրի ժամկետը երկարաձգվել:

Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման աշխատանքները մեկնարկել են 2-րդ եռամսյակում և այն նախատեսվում է պաշտոնապես ներկայացնել 4-րդ եռամսյակում:

*Միջոցառում 11. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում*

*Միջոցառում 12. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում/ քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում*

*Տե՛ս հավելված 1*

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիսրի ստեղծում և իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հանրայնացում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 18. **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝*<br>Հանրային ռեգիստր<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Առաջին-չորրորդ եռամսյակներ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 19. **Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝*<br>Ուսուցում<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Չորրորդ եռամսյակ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 20. **Իրական** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **սեփականատերերի հայտարարագրերի ներկայացում ընկերությունների կողմից** | *Արդյունքը՝* Հայտարարագրեր<br><br>*Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ | Ընթացիկ | Ընկերություններ, իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստր | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 21. **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի և իրական սեփականատերերի ներկայացման գործընթացի վերլուծություն, թույլ կողմերի վերհանում, իրավական ակտերի նախագծում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* քննարկումներ, կարծիքներ, վերլուծություն, իրավական ակտերի նախագծեր<br>*Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, Իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խումբ | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

### *Միջոցառում 18. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում*

Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրական սեփականատերերի (ԻՍ) բացահայտման հանրային ռեգիստրի ծրագրային ապահովման համար ծառայությունների գնման մրցույթում ընտրվել է VXSoft ընկերությունը, 2020 թվականի մայիսի 12-ին ընկերության հետ կքնվել է պայմանագիր և մեկնարկել են ԻՍ ռեգիստրի մշակման աշխատանքները:

Հունիսի 30-ին ԲՇԽ-ի քննարկմանն է ներկայացվել Իրական սեփականատերերի (ԻՍ) ռեգիստրի կառուցվածքի նախագիծը: Իրական սեփականատերերի ռեգիստրի հարթակը, որտեղ հայտարարատու ընկերությունները բաց տվյալների ձևաչափով ներկայացնելու են ԻՍ վերաբերյալ առցանց հայտարարագրերը, հանդիսանալու է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի մասը: Հայտարարագիր ներկայացնելու կամ դրա տվյալներին ծանոթանալու համար օգտագործողները անվճար կարողանալու են մուտք գործել www.e-register.am կայքը:

VXSoft ընկերությունը լրամշակում է ռեգիստրի կառուցվածքը՝ հիմք ընդունելով ԱՃԹՆ-ի քարտուղարության, ՀՀ արդարադատության նախարարության և ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տրամադրած նկատառումները: Լրամշակված կառուցվածքի հաստատումից հետո կիրականացվեն բուն ծրագրային ապահովման և ռեգիստրի գրաֆիկական ձևավորման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում պատվիրատուի աշխատանքնային խմբի, VXSoft ընկերության և OpenOwnership գլոբալ ռեգիստրի պատասխանատուների մասնակցությամբ անցկացվել է 3 տեսազանգ,

որոնց ընթացքում քննարկվել են ԻՍ ռեգիստրի ծրագրային ապահովման ստեղծման մի շարք տեխնիկական հարցեր, որոնք վերաբերում են տվյալների ստուգմանը, ԻՍ հայտարարագրերի ներկայացման և հրապարակման գործընթացներին, տվյալների դաշտերի նույնականացմանը, բաց ձևաչաձերով տվյալների հասանելիությանը, իրական սեփականության շղթաների գրաֆիկական ներկայացման լուծումներին և այլն:

*Միջոցառում 19. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում*

*Միջոցառում 20. Իրական սեփականատերերի հայտարարագրերի ներկայացում ընկերությունների կողմից*

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգստրի գործակալության https://www.e-register.am/ կայքում pdf ձևաչափով բեռնվել են հանքարդյունաբերող ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերը:

*Միջոցառում 21. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի և իրական սեփականատերերի ներկայացման գործընթացի վերլուծություն, թույլ կողմերի վերհանում, իրավական ակտերի նախագծում*

Բազմաշահառու խմբին և այլ շահագրգիռ կողմերին ներկայացվել են ապրիլի 20-ի դրությամբ հայտարարատու ընկերությունների կողմից ներկայացված հայտարարագրերի հղումները և առաջարկությունների ներկայացման նպատակով տեղեկացվել է, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում արձանագրված որոշ թերի կարգավորումներ և անճշտությունների և դրանց վերացման նպատակով նախատեսվում է մշակել իրավական ակտերի նախագծեր, որոնք կտրամադրվեն ԲՇԽ-ի քննարկմանը:

Օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ ՏԿԵՆ-ը տեղեկացրել է, որ 2019թ. դեկտեմբերին դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ ներկայացնելով իրական սեփականատերերի բացահայտումը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ ընդհանուր նկատառումները և առաջարկելով դրանց հիման վրա բարեփոխել գործող իրավական կարգավորումները:

Հունիսի 5-ին ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից ներկայացվել է հայտարարություն[7], որտեղ ներկայացվել են ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության առաջարկություններն իրական սեփականատերերի թափանցիկության ապահովմանն առնչվող խնդիրների լուծման ուղղությամբ:

[7] https://transparency.am/hy/news/view/3086

| **ՆՊԱՏԱԿԸ** | ***Հայաստանի ԱՃԹՆ թեկնածության / անդամակցության կարգավիճակի ապահովում*** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 24. **Վավերացման գործընթաց** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Վավերացում<br><br>*Վերջնաժամկետը՝* Երրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն, միջազգային վավերացնողներ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 24.1 **Անկախ վավերացնողների հաշվետվությամբ ներկայացված ուղղիչ գործողությունների իրականացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* վերլուծություն, Ուղղիչ գործողությունների իրականացման վերաբերյալ և բացերը լրացնող տեղեկատվության հրապարակում<br><br>*Վերջնաժամկետը՝* Երրորդ եռամսյակ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ--ի քարտուղարություն, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն, պետական մարմիններ, անկախ ադմինիստրատոր | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 24.2 **ԱՃԹՆ-ի իրականացման ամրապնդմանն ուղղված առաջարկվող գործողությունների իրականացում (համակարգված բացահայտումեր, կարողությունների հզորացում, հրապարակվող պայմանագրերի շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ-ի իրականացմանը հաշվեքննիչ պալատի ներգարվում, ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացի վերաբերյալ Աժ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Համապատասխան աշխատանքային խմբի կազմավորում, քննարկումներ, կարծիքներ, վերլուծություն, վավերացման հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների իրականացման առաջընթացի մասին եռամսյակային տեղեկատվության ձևաչափ, իրավական ակտերի նախագծեր | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն, պետական մարմիններ, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, անկախ ադմինիստրատոր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ներկայացուցիչների իրազեկում, վավերացման հաշվետվությամբ և ԱՃԹՆ-ի զեկույցով ներկայացված առաջարկությունների իրականացման առաջընթացի մասին եռամսյակային տեղեկատվության ձևաչափի մշակում, պետական մարմինների կողմից սահմանված ձևաչափով տեղեկատվության ներկայացում)** | *Վերջնաժամկետը՝*<br>Ընթացիկ | | | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 25.<br>**ԲՇԽ-ի նիստերի անցկացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>ԲՇԽ-ի նիստեր<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստ չի անցկացվել՝ պայմանավորված նաև կորոնավիրուս (COVID-19) հիվանդության կապակցությամբ Հայաստանում արտակարգ դրության ռեժիմի սահմանմամբ, որի պարտ է նշանակվել ԲՇԽ-ի նախագահ Տիգրան Ավինյանը: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 26. | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում** | *Արդյունքները՝* հանդիպումներ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 27. **ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ՀՀ վարչապետի որոշում, ԲՇԽ<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ-ի խմբակցություններ, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 29. **ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ԱՃԹՆ-ի խորհրդի նիստեր<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 31. **Հայաստանի ԱՃԹՆ-ի** 2019**թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողական<br><br>Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ | Իրականացվել է մասամբ/ ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն | ԲՇԽ-ի կողմից հաստատումը նախատեսվում է երրորդ եռամսյակում: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 32. **Հայաստանի ԱՃԹՆ-ի** 2020**թ. աշխատանքային ծրագրի լրամշակում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. լրամշակված աշխատանքային ծրագիր<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Իրականացվել է մասամբ/ ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | ԲՇԽ-ի կողմից հաստատումը նախատեսվում է երրորդ եռամսյակում: |

| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 34. **Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
|---|---|---|---|---|
| | *Արդյունքները՝* Դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 35. **Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Պետական բյուջեի աշխատանք, հաշվետվությունների կազմում, ծրագրերի իրականացման համակարգում գնումների գործընթացի ապահովում<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 37. **ՀՀ ԱՃԹՆ-ի** 2019 **տարեկան հաշվետության կազմում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ՀՀ ԱՃԹՆ-ի 2019 տարեկան հաշվետություն<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Իրականացվել է մասամբ/ ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | ԲՇԽ-ի կողմից հաստատումը նախատեսվում է երրորդ եռամսյակում: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 38. **ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Եռամսյակային հաշվետվություններ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 39. | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ** | *Արդյունքները՝* գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր, միջազգային աշխատանքային խմբերի առցանց հանդիպումներ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 40. **ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝* Երրորդ եռամսյակ | Ընթացիկ | | Նախատեսվում է իրականացնել 3-րդ եռամսյակում: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 41. **Թարգմանչական աշխատանքներ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 24. Վավերացման գործընթաց*

Ապրիլի 9-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը տրամադրել է Հայաստանի վավերացման գնահատականն ու Անկախ վավերացնողի վավերացման զեկույցի նախագիծը, որը ներկայացվեց ԲՇԽ-ի անդամներին:

Համաձայն նախնական գնահատականի՝ Հայաստանը 24 պահանջներից 22-ի մասով գրանցել է բարձր (18 satisfactory-բավարարող և 4 beyond-գերազանցող) առաջընթաց, սակայն 2 պահանջի մասով գրանցվել են թերություններ: Ուստի, Հայաստանին նշանակվել է 2 ուղղիչ գործողություն: ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը նշել էր, որ Հայաստանի ԲՇԽ-ի կողմից նշված թերությունների վերաբերյալ մինչև ս.թ. ապրիլի 30-ը մեկնաբանություններ ուղարկելու դեպքում, դրանք հաշվի կառնվեն և անկախ վավերացնողը կարող է տրված գնահատականը վերանայել: Միաժամանակ, Միջազգային քարտուղարությունը տեղեկացրել էր, որ ուղղիչ գործողություններին արձագանքելու նշված ժամկետը կարող է երկարաձգվել, եթե Հայաստանի ԲՇԽ-ն նման անհրաժեշտության կարիք ունենա:

*Առաջարկվող ուղղիչ գործողություններն էին՝*

*1) ԱՃԹՆ-ի ստանդարտի 5. 2 պահանջի՝ Բնապահպանական և առողջապահական նպատակային ծրագրերի մասով.*

*Ըստ 5.2 պահանջի, Հայաստանը պարտավոր է բացահայտել եկամուտների տեղաբաշխման բանաձևը և այդ բանաձևի ու համայնքներին փոխանցված փաստացի վճարումների միջև առկա անհամապատասխանությունները: Հայաստանը պետք է բացահայտի՝ (1) մետաղական հանքեր շահագործող ընկերությունների կողմից բնապահպանական վճարումների ընդհանուր գումարի հաշվարկի հիմքը, որը պետք է վերաբաշխվի համայնքներին, (2) ուսումնասիրվող տարում ստացված գումարը, (3) յուրաքանչյուր ազդակիր համայնքի համար նախատեսված չափաբաժինները, (4) յուրաքանչյուր համայնքին հատկացված ընդհանուր գումարը, (5) փաստացի փոխանցումները, և (6) եկամուտների տեղաբաշխման բանաձևի համաձայն հատկացվող գումարների, յուրաքանչյուր համայնքին փաստացի հատկացված գումարների և յուրաքանչյուր համայնքին փաստացի փոխանցված գումարների միջև առկա անհամապատասխանությունները: Պատասխանատու պետական գերատեսչությունները, պետք է մեկնաբանեն հնարավոր անհամապատասխանությունների պատճառները:*

*2) ԱՃԹՆ-ի ստանդարտի 6.1 պահանջի՝ Ընդերքօգտագործման պայմանագրերով պարտադիր սահմանված սոցիալ տնտեսական պարտավորությունների մասով.*

*6.1 պահանջի համաձայն, Հայաստանից պահանջվում է տեղեկատվություն բացահայտել արդյունահանող ընկերությունների պարտադիր բնաիրային սոցիալական ծախսումների բնույթի, ինչպես նաև պարտադիր սոցիալական վճարումների՝ երրորդ կողմ հանդիսացող հնարավոր շահառուների վերաբերյալ: Հայաստանը պետք է հետևի, որ երկրի ԱՃԹՆ-ի զեկույցը և/կամ առցանց հարթակն ապահովեն ընկերությունների կատարած պարտադիր սոցիալական ընդհանուր ծախսումների ընդհանուր պատկերը՝ թե՛ դրամական և թե՛ բնաիրային արտահայտությամբ: Առաջիկա ԱՃԹՆ-ի զեկույցի համար հորդորվում է փաստագրել պարտադիր սոցիալական վճարումների էականության գնահատականը:*

Հաշվի առնելով COVID-ով պայմանավորված Հայաստանում գործող արտակարգ իրավիճակի ռեժիմը և դրա հետևանքով աշխատանքային գործընթացների և փաստաթղթաշրջանառության դանդաղումն ու դժվարացումը, ինչպես նաև ԲՇԽ-ի նախագահ փոխվարչապետ Տ. Ավինյանի ՀՀ պարետ նշանակումը և դրա հետ կապված վերջինիս աշխատանքային ծանրաբեռնվածությունը, ԲՇԽ-ի անունից ապրիլի 13-ին նամակ է ուղարկվել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն՝ վավերացման եզրակացության ուղղիչ գործողությունների վերաբերյալ մեկնաբանությունների ներկայացման վերջնաժամկետը մինչև ս.թ. մայիսի 15-ը երկարաձգելու խնդրանքով: ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից խնդրանքը բավարարվել է և վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև մայիսի 15-ը:

*Միջոցառում 24.1. Անկախ վավերացնողների հաշվետվությամբ ներկայացված ուղղիչ գործողությունների իրականացում*

Ս. թ. ապրիլի 14-ին ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը բոլոր լիազոր մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպել է տեսազանգ՝ ԱՃԹՆ-ի վավերացման զեկույցում արձանագրված ԱՃԹՆ-ի ստանդարտի 5. 2 պահանջի թերակատարման գծով ուղղիչ գործողությունները հեռավար քննարկելու համար: Քննարկմանը մասնակցել են ԱՃԹՆ-ի հայաստանյանյան քարտուղարությունից Լուսինե Թովմասյանը, Անահիտ Առուստամյանը, Հասմիկ Մանուկյանը, ՀՀ ֆինանսների նախարարությունից՝ Օրի Ալավերդյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից՝ Արթուր Ղավալյանը, Քրիստինե Բաղդասարյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ Վիկտորյա Մարջանյանը, ՀՀ ԱՃԹՆ-ի 1-ին և 2-րդ զեկույցների կազմող Անկախ Ադմինիստրատոր «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ից՝ Հեղինե Ղուկասյանը:

Քննարկումից հետո, ապրիլի 23-ին քննարկման մասնակիցներին էլեկտրոնային փոստով ուղարկվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի Վավերացման հաշվետվությամբ ներկայացված ԱՃԹՆ-ի ստանդարտի 5. 2 պահանջի թերակատարման և դրա գծով առաջարկվող ուղղիչ գործողությունների շուրջ կայացած քննարկման արձանագրությունը՝ որով սահմանվում էր ԱՃԹՆ-ի վավերացման 5.2 ուղղիչ գործողությամբ պահանջվող տվյալների շրջանակը և պատասխանատուները:

Մայիսի 4-ին Շրջակա միջավայրի նախարարությունը պաշտոնապես ներկայացրել է արձանագրությամբ պահանջվող տեղեկատվությունը, մասնավորապես՝ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նշված ընկերությունների գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկը, համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունները, սահմանված բնապահպանական հարկի գումարների, համայնքների կողմից բնապահպանական ծրագրերի իրականացման համար հաշվարկված և փաստացի ծախսված գումարները:

ԲՇԽ-ի առաջարկությամբ և ՏԿԵՆ-ի միջնորդությամբ ազդակիր համայքների կայքերում հրապարակվել են 2016-2018թթ. հաստատված բնապահպանական և առողջապահական ծրագրերը[8]:

ԱՃԹՆ-ի վավերացման զեկույցում արձանագրված ԱՃԹՆ-ի ստանդարտի 6. 1-ին պահանջի թերակատարման գծով ուղղիչ գործողությունները հեռահար քննարկելու նպատակով ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը ապրիլի 21-ին կազմակերպել է տեսազանգ, որին մասնակցել են ԱՃԹՆ-ի հայաստանյանյան քարտուղարությունից Լուսինե Թովմասյանը, Անահիտ Առուստամյանը, Հասմիկ

[8] https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B6%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D6%80/?tab=87

Մանուկյանը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից Սերգեյ Աբրահամյանը, Փառանձեմ Դարբինյանը և Վիկտորյա Մարջանյանը:

Հեռահար քննարկման արդյունքներով ՏԿԵՆ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության հարցում է ուղարկվել ընկերություններին: Ընկերությունների կողմից ներկայացված լրացուցիչ տեղեկատվությունն ընդգրկել է նաև 2018թ. տվյալներ, որոնք կներառվեն ներկայումս մշակվող 2-րդ ազգային զեկույցում: Պայմանագրային սոցիալ-տնեսական պարտավորությունների վերաբերյալ ընկերությունների կողմից ներկայացված տվյալներում առկա են եղել անհամապատասխանություններ մասնավորապես՝ (1) ընկերությունների պայմանագրերի 3-րդ հավելվածների, (2) նույն ընկերությունների կողմից 2016-2018 թվականներին ներկայացված հրապարակային հաշվետվությունների տվյալների և (3) համայնքների կողմից այդ ընկերությունների վերաբերյալ ներկայացված հրապարակային հաշվետվությունների տվյալների միջև: Նշված անհամապատասխանությունները վերացնելու նպատակով ՏԿԵՆ-ը փոխգործակցել է համայնքների և ընկերությունների հետ և ճշգրտել տվյալները, որոնց հիման վրա փոփոխվել են նաև համապատասխան հրապարակային հաշվետվությունները:

Լիազոր մարմինների և ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը ամփոփվել է ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից: Ազգային քարտուղարությունը կազմել է Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման նախնական գնահատականի և վավերացման զեկույցի վերաբերյալ Բազմաշահառու խմբի մեկնաբանությունների փաստաթղթի նախագիծը, որում ներառվել են ինչպես ԲՇԽ-ի ընդհանուր մեկնաբանությունները վավերացման արդյունքների վերաբերյալ, այնպես էլ 5. 2-րդ և 6. 1-ին պահանջների մասով իրականացված ուղղիչ գործողությունները, այն է՝ համապատասխան տեղեկատվություն լրացուցիչ հրապարակվող տվյալների մասին: Մայիսի 8-ին փաստաթուղթն ուղարկվել է ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի անդամներին՝ համաձայնեցման:

Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից հավանության արժանացած վերջնական փաստաթուղթը ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը մայիսի 14-ին ուղարկել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն: ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում ստեղծվել են հայերեն և անգլերեն ենթէջեր, որում բաց տվյալների ձևաչափով հասանելի է ամբողջական տեղեկատվություն: Բոլոր նյութերը հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղումով՝ https://www.eiti.am/en/annual-reports/2018:

*Միջոցառում 24.2. ԱՃԹՆ-ի իրականացման ամրապնդմանն ուղղված առաջարկվող գործողությունների իրականացում (համակարգված բացահայտումներ, կարողությունների հզորացում, հրապարակվող պայմանագրերի շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ-ի իրականացմանը հաշվեքննիչ պալատի ներգրավում, ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացի վերաբերյալ ԱԺ ներկայացուցիչների իրազեկում, վավերացման հաշվետվությամբ և ԱՃԹՆ-ի զեկույցով ներկայացված առաջարկությունների իրականացման առաջընթացի*

*մասին եռամսյակային փեղեկափվության ձևաչափի մշակում, պետական մարմինների կողմից սահմանված ձևաչափով փեղեկափվության ներկայացում)*

ԱՃԹՆ-ի 2016-2017 թվականների զեկույցում և Հայաստանում վավերացման առաքելության հանդիպումների ժամանակ արձանագրված գործող կարգավորումների մի շարք բացերը շտկելու նպատակով՝ ՏԿԵՆ-ի կողմից մշակվել  է և 2020 թվականի փետրվարի 27-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ««Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը  մայիսի 6-ին առաջին ընթերցմամբ, իսկ մայիսի 27-ին՝ երկրորդ ընթացմամբ ընդունվել է Ազգային ժողովի կողմից: Օրենքով[9] սահմանվում է, որ.

- 2021 թվականից մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող բոլոր ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ կկատարվեն այն համայնքներում ծրագրերի իրականացման համար, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն:
- Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, կատարողականի որակի և հաշվետվողականության բարելավման ու թափանցիկության ապահովման նպատակով համայնքների հաստատված ծրագրերը յուրաքանչյուր տարի պետք է հրապարակվեն համայնքապետարանի կայքում և/կամ համապատասխան մարզպետարանի կայքում համայնքի ղեկավարի ներկայացմամբ:
- Համայնքի ղեկավարը պետք է կազմի հաշվետվություն իրականացված ծրագրի մասին: Իրականացված ծրագրի վերաբերյալ ավագանու կողմից հաստատված հաշվետվությունը մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը պետք է հրապարակվի համայնքապետարանի և/կամ համապատասխան մարզպետարանի կայքերում: Հաշվետվության ձևը պետք է ՏԿԵՆ-ի կողմից կողմից:
- Համայնքների կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկման կարգը վեցամսյա ժամկետում պետք է սահմանվի ՀՀ կառավարության կողմից:

*Միջոցառում 25. ԲՇԽ-ի նիստերի անցկացում*

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստ տեղի չի ունեցել, սակայն հունիսի 3-ին ԲՇԽ-ն էլեկտրոնային եղանակով հաստատել է Խորհրդատուի (Անկախ ադմինիստրատորի) կողմից Հայաստանի Հանրապետության 2019թ. ԱՃԹՆ-ի զեկույցի և նախնական ուսումնասիրության կազմման տեխնիկական առաջադրանքն ու ընդունել 3-րդ զեկույցի ու նախնական ուսումնասիրության շրջանակի սահմանման առնչվող մի շարք որոշումներ:

[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143032

*Միջոցառում 26. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում*

Հաշվետու ժամանակահատվածում անցկացված հանդիպում-քննարկումները նվիրված են եղել Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման զեկույցում արձանագրված ԱՃԹՆ-ի ստանդարտի 5. 2-րդ և 6. 1-ին պահանջների ուղղիչ գործողություններին և նկարագրված են վերը՝ Միջոցառում 24. 1-ում

*Միջոցառում 27. ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի հաստատում*

Հաշվետու ժամանակահատածում Հայաստանի հանքագործների և մետալուրգների միությունը իրականացրել է 2020-23թթ. ընթացքում ԱՃԹՆ ԲՇԽ-ում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտը ներկայացնող հիմնական և այլընտրանքային անդամների ընտրություն:
Մայիսի 26-ին տեղի է ունեցել այդ անդամների ընտրություններն անցկացնող հանձնաժողովի նիստ՝ Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ Հայկ Ալոյանի նախագահությամբ: Նիստին ներկայացվել են հայտարարված մրցույթի արդյունքները և միաձայն հաստատվել են ընտրված անդամների ցուցակները: Անցկացված մրցույթի արդյունքները ամփոփող նիստի արձանագրությունը տրամադրվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ներքո գործող ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությանը: Ստորև ընտրված անդամների ցուցակը.

1. Արթուր Նիկողոսյանը՝ «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ վարչական տնօրեն
2. Արմեն Ստեփանյանը՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ կայուն զարգացման գծով փոխնախագահ
3. Արտյոմ Պետրոսյանը՝ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ իրավաբանական տնօրեն
4. Մանվել Եղիազարյանը՝ «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ գլխավոր հաշվապահ
5. Վահե Վարդանյանը՝ «Գեոմայնինգ» ՍՊԸ գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ)
6. Գագիկ Շահնազարյանը՝ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)

Հունիսի 1-ից դադարեցրել է իր անդամակցությունը ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ Հարություն Մովսիսյանը, քանի որ մայիսի 27-ին նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն:

*Միջոցառում 29. ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն*

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը մասնակցել է հունիսի 16-17-ը հեռավար կայացած ԱՃԹՆ-ի Խորհրդի հերթական՝ 47-րդ նիստին:

Նիստի վերաբերյալ տեղեկատվությունը (օրակարգ, արձանագրություն, ընդունված որոշումներ և այլն) հասանելի է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կայքում:[10]

*Միջոցառում 31. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում*

Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականի հաստատումը ԲՇԽ-ի կողմից նախատեսվում է 3-րդ եռամսյակի ընթացքում:

*Միջոցառում 32. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրի լրամշակում և հաստատում*

Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. լրամշակված աշխատանքային ծրագրի հաստատումը ԲՇԽ-ի կողմից նախատեսվում է 3-րդ եռամսյակի ընթացքում:

*Միջոցառում 34. Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն*

Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ և քննարկումներ է ունեցել Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման վերաբերյալ:

Ապրիլի 2-ին միջազգային քարտուղարությունը ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունների ու անկախ ադմինիստրատորների մասնակցությամբ անցկացրել է սեմինար-քննարկում ամփոփ տվյալների նոր ձևաչափի և դրանում համակարգված կերպով բացահայտված տվյալների ներկայացման կարգի վերաբերյալ: Սեմինարին մասնակցել են ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը և EY ընկերության ներկայացուցիչը:

Հունիսի 23-ին առցանց հանդիպում-քննարկում (վեբինար) է տեղի ունեցել Համաշխարհային բանկի և Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության ներկայացուցիչների միջև հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և ԱՃԹՆ-ի առաքելության շուրջ:

Հունիսի 26-ին Հայաստանի ԱՃԹՆ քարտուղարության ներկայացուցիչները մասնակցել են Համաշխահային բանկի կողմից կազմակերպված «Հանքերի փակման և տնտեսական վերագործարկման ուսումնասիրություն. Հայաստան» աշխատության վեբինար/քննարկմանը:

*Միջոցառում 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք*

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ՀՀ ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրով տվյալ ժամանակահատվածի համար սահմանված միջոցառումների պլանավորման և իրականացման

[10] https://eiti.org/document/47th-eiti-board-meeting

աշխատանքները՝ համաձայնեցնելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ու Համաշխահային բանկի հետ՝ որպես դոնոր կազմակերպություն: COVID-19-ի համաճարակի հետ կապված Հայաստանում արտակարգ դրության ռեժիմով պայմանավորված՝ շահագրգիռ կողմերի, գործընկերների, ԲՇԽ-ի անդամների, իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խմբերի անդամների հետ հանդիպումները կազմակերպվել են առցանց՝ ապահովելով ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման հարցերի շուրջ պարբերաբար քննարկումներն ու համագործակցությունը, ինչպես նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացի շրջանակում անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

*Միջոցառում 37. ՀՀ ԱՃԹՆ-ի 2019 տարեկան հաշվետության կազմում և հաստատում*

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից մշակվել է ՀՀ ԱՃԹՆ-ի 2019 տարեկան հաշվետության նախագիծը: ԲՇԽ-ի կողմից հաստատումը նախատեսվում է 3-րդ եռամսյակում:

*Միջոցառում 38. ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում*

ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2020 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությունը: Վերջինիս հաստատումը ԲՇԽ-ի կողմից նախատեսվում է 3-րդ եռամսյակում, որից հետո կհրապարակվի ԱՃԹՆ հայաստանյան կայքում:

*Միջոցառում 39. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ-ի անդամ երկրների հետ*

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից Հայաստանին առաջարկվել է ընդգրկվել ԱՃԹՆ-ի հաշվետվության այլընտրանքային տարբերակներ կիրառելու՝ ԱՃԹՆ-ի խորհրդի կողմից առաջարկվող պիլոտային ծրագրում: Այդ թեմայով ապրիլի 30-ին տեսազանգ է կազմակերպվել ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացուցիչների միջև, իսկ մայիսի 14-ին՝ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության, ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության և Համաշխարհային բանկի ներկայացուցիչների միջև, որոնց ժամանակ քննարկվել է առաջարկի իրագործելիությունը Հայաստանում:

Այդ քննարկումների արդյունքներով ձևավորվել է հետևյալ մոտեցումը, այն է՝ խնդրել Անկախ ադմինիստրատորին քննարկել տվյալների որակը ապահովող կայուն և ծախսարդյունավետ տարբերակներ, դրանք ներկայացնել ԲՇԽ-ին և այս ու առաջիկա զեկույցների համար առաջարկություններ անել՝ աուդիտի և հավաստիացման գործելակարգերը ամրապնդելու ուղղությամբ: Բացի դրանից, խորհրդատուին խրախուսել, որպեսզի վերջինս դիտարկի հաջորդ հաշվետվությունների համադրման տարբերակներ, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնի հավաքագրման ընթացիկ գործընթացը ամրապնդելու ուղղությամբ:

Տեսազանգերից հետո, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից տրամադրված խորհրդատվության օգնությամբ՝ ԱՃԹՆ-ի 3-րդ ազգային զեկույցի կազմման Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքում ներառվեցին որոշակի դրույթներ, որոնց իրականացումը կնախապատրաստի Հայաստանին առաջիկա տարիներին կիրառել ԱՃԹՆ-ի հաշվետվության այլընտրանքային տարբերակ:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից հրավեր է ուղարկվել ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության, ԲՇԽ-ի անդամներին և այլ համապատասխան շահագրգիռ կողմերին մասնակցելու մայիսի 11-ին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հանքարդյունահանում հանուն զարգացման» ծրագրի (Extractives for Development Project (X4D)) կողմից կազմակերպված բնապահպանական հաշվետվությունների վերաբերյալ վեբինարին[11]:

Հունիսի 22-ին ԱՃԹՆ-ի Խորհրդի նախագահ Հելեն Քլարկը նամակ է հղել Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ Տիգրան Ավինյանին՝ տեղեկացնելով Covid-19 համաճարակի հետ կապված ԱՃԹՆ Խորհրդի կողմից ընդունված որոշումների մասին: Դրանք հասանելի են նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կայքում[12]:

Հաշվի առնելով, որ ռեսուրսներով հարուստ երկրների համար COVID-19 համավարակն առաջ է բերել եռակի ճգնաժամ՝ լարված հանրային առողջապահական համակարգ, արդյունահանվող ապրանքների գների անկում և տնտեսական կտրուկ անկում, առանձնակի կարևորվում է թափանցիկությունն ու վստահությունը՝ խելացի և պատասխանատու քաղաքականություն մշակելու համար: Հենց այս թեմաներին էր նվիրված հունիսի 29-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից կազմակերպված «Ինչու է թափանցիկությունը կարևորվում եռակի ճգնաժամի մեջ հայտնված բնական պաշարներով հարուստ երկրների համար» խորագրով վեբինարը[13], որին մասնակցել են նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության ներկայացուցիչները: ԱՃԹՆ-ի խորհրդի նախագահ Հելեն Քլարկի կողմից մոդերացվող պանելային քննարկման խոսնակների կազմում ներգրավված էին COVID-19-ի հարցերով Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) գլխավոր տնօրենի հատուկ պատվիրակ Դեյվիդ Նաբարրոն, Նիգերիայի ԱՃԹՆ-ի գործադիր քարտուղար Վագիրի Ադիոն և Միջամերիկյան Զարգացման Բանկի (Inter-American Development Bank) գլխավոր մասնագետ Ռոբերտո դե Միխլեն:

Սույն թեմայի շրջանակում անցկացված և անցկացվելիք վեբինարների մասին լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կայքում[14]:

---

[11] https://www.youtube.com/watch?v=m20MM5Gqcyg
[12] https://eiti.org/covid19-resource-centre

[13] https://youtu.be/5t7T1p5nlWA
[14] https://eiti.org/event/Transparency-Matters?utm_source=Transparency+Matters+seminar+series&utm_campaign=1d2d2a88ae-

Ի աջակցություն «Իրական սեփականատերերի բացահայտման» միջազգային գործընթացի՝ ձևավորվել է միջազգային Խորհրդատվական խումբ (Advisory Group)։ Խմբում ընդգրկված են մասնակից երկրների պետական մարմինների ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ։ Միջազգային Խորհրդատվական խմբի (Advisory Group) կողմից Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները, ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցությունը հրավեր է ստացել մասնակցելու ապրիլի 30-ին կազմակերպված առցանց քննարկմանը (տեսազանգի միջոցով)։ Տեսազանգի ընթացքում քննարկվել են իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունն օգտագործողների՝ բանկերի, ներդրողների, իրավապահ մարմինների, դատախազների, հետաքննող լրագրողների, ակտիվիստների և այլնի ներկա կարիքները։ Որոշ քննարկումներ նախատեսվում է ընդլայնել, ինչպիսիք են բոլոր ընկերությունների կողմից իրենց տնօրեններին բացահայտելու անհրաժեշտությունը, ընկերություններ ստեղծելու համար օգտագործվող կեղծված ինքնության ռիսկերը, ինչպես նաև ճիշտ իրավական դաշտ ունենալուն ուղղված  քաղաքականության այլ քննարկումները։ Ըստ Advisory Group-ի՝ այդ քննարկումների և կարծիքների փոխանակման արդյունքը կարող է ներառվել նշված քաղաքականության զուգահեռ քննարկումներում, այդ թվում, ԵՄ փողերի լվացման դեմ ուղղված (AML) 5-րդ գործողությունների ծրագրի շուրջ խորհրդակցությունում և B20-ի պահանջների ամբողջականության և համապատասխանության ապահովման աշխատանքային խմբում։

*Միջոցառում 41. Թարգմանչական աշխատանքներ*

Հաշվետու ժամանակահատվածում անգլերեն են թարգմանվել ԱՃԹՆ-ի 2019թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի լրամշակումները, ԲՇԽ-ի լրամշակված որոշումները ԱՃԹՆ-ի 2019 հաշվետու տարվա ազգային զեկույցի և նախնական ուսումնասիրության շրջանակի ու էականության շեմերի վերաբերյալ, Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. լրամշակված աշխատանքային ծրագրի նախագիծը, Հայաստանի ԱՃԹՆ-ի նախնական գնահատականի և վավերացման զեկույցի վերաբերյալ ԲՇԽ-ի նկատառումների փաստաթուղթը և կից հավելվածները, իրական սեփականատերերի վերաբերյալ ներկայացված հայտարարագրերը։

| **ՆՊԱՏԱԿԸ** | **ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ զեկույցի կազմում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 42. | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

EMAIL_CAMPAIGN_2019_05_28_12_16_COPY_01&utm_medium=email&utm_term=0_043827ed0c-1d2d2a88ae-104262068

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ՀՀ կառավարության** 2018**թ. Հունիսի** 8-**ի** N666 **որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում, նախագծի հաստատում ԲՇԽ-ի կողմից և ներկայացում ՀՀ կառավարություն** | *Արդյունքը՝* ՀՀ կառավարության որոշում<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Չի իրականացվել | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | Հաշվետու ժամանակահատվածում որոշման փոփոխության անհրաժեշտություն չի եղել: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 43.1 **ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեխանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր, ԲՇԽ-ի նիստ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, այլ շահագրգիռ մարմիններ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 46. **Հայաստանի ԱՃԹՆ-ի** 2018**թ. հաշվետու տարվա զեկույցի մշակում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Տեխնիկական առաջադրանք<br><br>*Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ, 2019թ.- երրորդ եռամսյակ, 2020թ. | Ընթացիկ | Անկախ ադմինիստրատոր, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 47. | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ԱՃԹՆ-ի** 2019**թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում** | *Արդյունքը՝* Տեխնիկական առաջադրանք<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 43.1. ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի ներկայացման արդյունքում սփացված առաջարկությունների, բացահայփված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարփուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեխանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով*

Վավերացման գործընթացի շրջանակում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերը քննարկվել են ԲՇԽ-ի կողմից, հաստատվել է աշխատանքների ժամանակացույց և դրան համապատասխան իրականացվել են աշխատանքներ:
Տե՛ս Միջոցառում 24.1:

*Միջոցառում 46. Հայասփանի ԱՃԹՆ-ի 2018թ. հաշվեփու փարվա զեկույցի մշակում*

Ինչպես նշվել է վերևում (տես Միջոցառում 10-ը ), Անկախ ադմինիստատոր «Էրնսթ ընդ Յանգ» (EY) ՓԲԸ-ն վերջնական զեկույցը կներկայացնի 3-րդ եռամսյակում:

Հունիսի 22-ին ԲՇԽ-ի անդամների քննարկմանն է ներկայացվել EY ընկերության կողմից պատրաստված Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ՝ 2018 հաշվետու տարվա զեկույցի նախագիծը, որտեղ ամփոփվել են նաև զեկույցի կոնտեքստուալ մասի վերաբերյալ ԲՇԽ-ի կողմից նախկինում արված մեկնաբանությունները:

Մեկնաբանությունների համար զեկույցի նախագիծը լիազոր պետական մարմիններին պաշտոնապես տրամադրվել է հունիսի 23-ին՝ վարչապետի հանձնարարականով: ԲՇԽ-ի կողմից Զեկույցի նախագիծը համարվել է ընդունելի՝ առարկությունների բացակայության հիմքով:

Զեկույցի նախագծի անգլերեն տարբերակը հունիսի 30-ին տրամադրվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կարծիքին:

*Միջոցառում 47. ԱՃԹՆ-ի 2019թ. հաշվեփու փարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության փեխնիկական առաջադրանքի մշակում և հասփափում*

ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 հաշվետու տարվա ազգային զեկույցի և հաջորդ տարվա զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի նախագիծը և տրամադրվել ԲՇԽ-ի քննարկմանը: Այն կազմվել է՝ հաշվի առնելով ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները, ԱՃԹՆ-ի իրականացման զարգացումները, ԲՇԽ-ի որոշումները՝ այդ թվում, նախնական ուսումնասիրության ծածկույթի վերաբերյալ և ԱՃԹՆ-ի ստանդարտի նոր պահանջների վերաբերյալ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ցուցումները: Կարծիքների և մեկնաբանությունների համար ԲՇԽ-ի անդամներին է տրամադրվել նաև բազմաշահառու խմբի այն որոշումների նախագծերը, որոնք անհրաժեշտ են եղել ընդունել՝ զեկույցի և նախնական ուսումնասիրության կազմման պատշաճ և ԱՃԹՆ-ի պահանջները բավարարող կարգը պահպանելու համար (ներկայացվել են այն որոշումների նախագծերը, որոնք ԲՇԽ-ի նախորդ նիստերին չեն քննարկվել):

Տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն՝ կարծիքի, ինչպես նաև Համաշխարհային բանկի համաձայնությանը, քանի որ զեկույցը կազմվելու է ՀԲ-ի դրամաշնորհի շրջանակում:

Տեխնիկական առաջադրանքով նախատեսվում է Զեկույցը և նախնական ուսումնասիրությունը կազմել զուգահեռաբար, իսկ Զեկույցը կազմելիս հնարավորինս ինտեգրել տվյալների համակարգված բացահայտման գործելակարգը:

Մայիսի 29-ին ԲՇԽ-ին է տրամադրվել ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 հաշվետու տարվա զեկույցի և հաջորդ տարվա զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի լրամշակված տարբերակը, որտեղ հաշվի են առնվել ԲՇԽ-ի անդամների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ներկայացրած նկատառումներն ու առաջարկությունները, ինչպես նաև ԲՇԽ-ի լրամշակված որոշման նախագիծը՝ ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 հաշվետու տարվա ազգային զեկույցի և նախնական ուսումնասիրության շրջանակի ու էականության շեմերի վերաբերյալ:

Հունիսի 3-ին՝ ԲՇԽ-ն էլեկտրոնային եղանակով հաստատել է ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 հաշվետու տարվա ազգային զեկույցի և նախնական ուսումնասիրության շրջանակն ու էականության շեմերը և ԱՃԹՆ-ի 3-րդ՝ 2019 հաշվետու տարվա ազգային զեկույցի ու հաջորդ տարվա զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը: Ներկայացվել են նաև թեկնածուներ՝ Անկախ ադմինիստրատորի ընտրության գնահատող հանձնաժողովում ներգրավվելու համար:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդնում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 54. | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության Ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում** | *Արդյունքները՝* Ճանապարհային քարտեզի միջոցառումներ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, համապատասխան նախարարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 55. **Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, առաջարկությունների ներկայացում, օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 54. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության Ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում*

Մարտի 31-ին ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության հարցերով զբաղվող աշխատանքային խմբի կարծիքին տրամադրված «Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատման» զեկույցի վերաբերյալ իրենց դիտարկումներն են ներկայացրել Պետական եկամուտների կոմիտեն, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխումների կենտրոնը, ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության անդամները: Նշված դիտարկումները փոխանցվել են ուսումնասիրության պատվիրատու հանդիսացող փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակ՝ հետագա ընթացքի համար:

Ապրիլի 28-ին ԲՇԽ-ի անդամների կարծիքին և մեկնաբանությունների ներկայացմանն է տրամադրվել Համաշխարհային բանկի «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության» դրամաշնորհային ծրագրի շրջանակում ՀՀ կառավարության կողմից պատվիրված «COVID-19-ի ազդեցության գնահատումը հանքարդյունաբերության ոլորտի վրա» հաշվետվության նախագիծը, մայիսի 5-ին՝ վերջնական նախագիծը

և մեկնաբանությունների արձագանքները՝ լրացուցիչ նկատառումների համար: Կարծիքներ են ներկայացվել Պետական եկամուտների կոմիտեի, Շրջակա միջավայրի նախարարության, ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության և ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից, որոնք տրամադրվել են պատվիրատու հանդիսացող փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակ՝ հետագա ընթացքի համար:

Հունիսի 11-ին ԲՇԽ-ի անդամներին ի գիտություն է ուղարկվել «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի թիվ 969 - Ա որոշումը[15] (նիստի օրակարգ, հարց 39 https://www.e-gov.am/sessions/archive/2020/06/11/):

Հունիսի 16-ին ԲՇԽ-ի անդամներին ի գիտություն է ուղարկվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft.am միասնական կայքում հրապարակված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը[16], որով կարգավորվում են ռոյալթիի հաշվարկման համար խտանյութի իրացման շրջանառությունը որոշելու հարցերը: E-drafts համակարգում կարծիքների ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2020թ. հուլիսի 2-ը:

*Միջոցառում 55. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, առաջարկությունների ներկայացում, օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ*

Միջոցառումը չի իրականացվել հաշվետու ժամանակահատվածում:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների կարողությունների հզորացում, ԱՃԹՆ-ի մեյնսթրիմինգ, տվյալների համակարգված բացահայտման խրախուսում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 58. | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

[15] https://www.e-gov.am/gov-decrees/item/34230/

[16] https://www.e-draft.am/projects/2538/about

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հրապարակային հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչներին հրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակը օգտագործելու վերաբերյալ խորհրդատվության ներկայացում** | *Արդյունքները՝* Խորհրդատվություն<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ- երրորդ եռամսյակ | Չի իրականացվել | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, անկախ աուդիտոր | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 58. Հրապարակային հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչներին հրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակը օգտագործելու վերաբերյալ խորհրդատվության ներկայացում*

Հաշվետու ժամանակահատվածում հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու վերաբերյալ խորհրդատվության ներկայացման կարիք չի առաջացել՝ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2018թ. Հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարման անհրաժեշտություն չի եղել, հետևաբար նաև հաշվետվությունների ձևաչափերը և հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակը փոփոխությունների չեն ենթարկվել:

*Հավելված 1*

**2020 թվականի երկրորդ եռամսյակում «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքները**[17]

*Տեղեկատվությունը տրամադրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից*

*1. Հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում*

1. 1 Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված դրամաշնորհային ծրագրի շրջանակում, հաշվետու ժամանակահատվածում Youtube-ի հարթակում հրապարակել է թվով ինը ուսուցողական տեսանյութ՝ պատասխանատու հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի Ստանդարտի և գործընթացների վերաբերյալ՝ ԱՃԹՆ ԲՇԽ անդամների, ԱՃԹՆ շահագրգիռ կողմերի և հանրության իրազեկման նպատակով: Նշված ուսուցողական տեսանյութերն անդրադարձել են հետևյալ թեմաներին.

1. ԱՃԹՆ ստանդարտ
2. Բազմաշահառու խումբ
3. Իրական սեփականատերերի բացահայտում
4. Պայմանագրերը և ընդերքօգտագործման թույլտվությունները Հայաստանում
5. Արդյունահանող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները և վճարումները
6. Կառավարության եկամուտները և ծախսերը հանքարդյունաբերության ոլորտում
7. Սոցիալական ծրագրերը հանքարդյունաբերության ոլորտում
8. Արտադրության և երկրաբանական ուսումնասիրությունների տվյալները
9. Պատասխանատու հանքարդյունաբերություն՝ բնապահպանական և առողջապահական պատասխանատվություն, տնտեսական և կայուն զարգացման ապահովում

[17] Տեղեկատվությունը տրամադրվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից

*2. Հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում/քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում*

2.1 Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը սույն թվականի մայիսի 25-ին, 26-ին, 27-ին , հունիսի 1-ին և հունիսի 2-ին իրականացրել է 2-ժամյա տևողությամբ սեմինարների շարք[18] «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ստանդարտի և գործընթացների վերաբերյալ» թեմայով: Նշված սեմինարներին հեռավար եղանակով մասնակցել են ԱՃԹՆ ԲՇԽ անդամներ, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև ակտիվ քաղաքացիներ: Թվով 37 մասնակիցներ բարձր են գնահատել նշված միջոցառումը (միջին գնահատական՝ 4.5 միավոր 5 միավորից):

Ի լրումն հեռավար սեմինարի կազմակերպման, Կենտրոնի կողմից մշակվել է հեռավար ուսուցման օնլայն հարթակ[19], որն անդրադառնում է ԱՃԹՆ ստանդարտին, հիմնական պահանջներին, հասկացություններին և ընթացակարգերին, ԱՃԹՆ բազմաշահառու խմբի (ԲՇԽ) գործառույթներին, պատասխանատու հանքարդյունաբերության հիմնական սկզբունքներին և ԱՃԹՆ վերաբերյալ մեդիա հաղորդակցության առանձնահատկություններին:

Հարթակը հասանելի է լայն հանրությանը՝ նշված թեմաներով ինքնակրթվելու նպատակով:

*3. Հանքարդյունաբերության ոլորտում ներգրավված ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտում*

3.1 Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն ուսումնասիրել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հրապարակված իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչի արդյունքում մշակվել են ԱՃԹՆ ԲՇԽ քաղաքացիական հասարակության խմբակցության Առաջարկությունները[20] իրական սեփականատերերի բացահայտման գործընթացում արձանագրված որոշ խնդիրների լուծման ուղղությամբ, որոնք հրապարակվել են հունիսի 12-ին:

---

[18] https://newsroom.aua.am/2020/06/26/training-eiti-responsible-mining/?fbclid=IwAR1KIuUq5jxRvOBn8kNkEpcIy1JPHHyAXiJzUqXPlXH1X_xsFQV0DctuKm0
[19] https://crm.aua.am/hy/elearning/eiti/
[20] https://transparency.am/files/publications/1591954940-0-164787.pdf?v=4